յեան 10 ր., Մարկոս Խոսրուապարեան 5 ր., Մանուկ Զօլֆաթով 5 ր., Խաչուկ Թիֆլերեան 10 ր., Վանան Քէօլչեան 5 ր., Պետրոս Քէչէչեան 5 ր., Մինաս Սուպաչեան 3 ր., Քերոբ Մուրադչեան 2 ր., Սարգիս Խուճեան 5 ր., Յովհաննէս Չալաթեան 3 ր., Միքայէլ Ղեղինչեան 2 ր., Յարութիւն Խաչատեան 2 ր., Կարապետ Թիֆլերեան 1 ր., Ց. Սահակեան 1 ր., պ. Սալիքեան 3 ր., Վարդերես Ախչէան 10 ր., Աբրամով 1 ր., Ստեփանոս Էֆր-Մարտիրոսեան Փոփով 3 ր., Ն. Ն. 5 ր., Միքայէլ Մահաճեան 10 ր., Միքայէլ Փոփով 50 ր., Մինաս Զաքիրեան 10 ր., Կարապետ Հէքիմեան 3 ր., Մանուէլ Թուխմով 10 ր., Միքայէլ Աւագեան 3 ր., Յովհաննէս Խրիմեան 10 ր., Գրիգոր Աստեան 10 ր., Սահակ Արմաքէչեան 3 ր., Ց. Փափեան 2 ր., Յովհաննէս Զուպարեան 10 ր., Սարգիս Հալաչեան 5 ր., Յովակիմ Զարիֆեան 1 ր., Մարկոս Ծատուրեան 5 ր., Խաչերես Սազիրեանց 25 ր., Պետրոս Խաչաճեան 3 ր., Սարգիս Գեւորգումեան 1 ր., Լուսեղէն Փոփով 5 ր., Գարրիէլ Մելքոնեան 10 ր., Աստուածատուր Աղապապեան Օպչեան 10 ր., Կատարագրութիւնը կը չարունակվի։

Այսպէս մանգամայն քաջալեր պարտաւորութիւն կը համարեմ հրատարակաւ յայտնել իմ անկեղծ շնորհակալութիւնը վերև յիշեալ բոլոր նուիրատուներանց, որք մեծաւ համակրութեամբ իրանց լուսեան նուիրեցին այսպիսի ստուգաժամանց գործի համար։

Յովհաննէս Գէորգեան Խաչիրանեան

---

## ՆԱՄԱԿ ԱԼԻՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

14 ապրիլի

Վանայ սովհատների համար ժողովեցի 72 բուրլի և ուղարկեալ ընդ այսմ ձեզ, խնդրեմ հասցնել այդ փողերը ուր հարկն է։ Այդ գումարի մասը հաւաքված է Օլտի քաղաքումը, իմ խնդրանքս։

Ահա ցուցակը նուիրատուների։ Ալիքսանդրապօլում Պ. Զիլինգոյեան 10 բուբլի, Մ. Զիլինգոյեան 10 ր., Ռաֆայելեան 10 ր., Ազ. Օհանջանեանց 6 ր., Ց. Սահրադեան 3 ր., ընդամենը 39 ր., Օլտի (Զարայ նահանգում.) Տրդատ Սայատեան 5 ր., Ռաֆայէլ 1 ր., Բագրատ 1 ր., Խորէնէ Ռասհազով 1 ր., Սեւարքի 1 ր., Վաչենկո 1 ր., Աբելոս 8 ր., Ռեկո 2 ր., Ն. Չիգնադզե 1 ր., Սուքեսկի Ռակոզա 1 ր., Խաչաեվ 3 ր., Խ. Մարուքեանց 1 ր., Արշակ Մելիքանեանց 2 ր., Իսկանդերի 1 ր., Օրանեսով 3 ր., Ա. Մելիքանեանց 1 ր., ընդամենը 33 ր. Բոլորը 72 ր.

Ալիխէն Մելիք-Ազամեանց

---

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս. 30 ապրիլի

Դեռ 1878 թուի յունիսի 16/28 Բերլինի կոնգրէսում, ինչպէս որ կարդում էինք առուս լրագիրներում այդ նշանաւոր ժողովի 8-րդ արձանագրութիւնները, մի չատ երեւելի խօսակցութիւն տեղի ունեցաւ, որ Եւրոպայի ամբողջ արեւելեան կէսի համար սկսել է ունենալ ամենացանկալի արդիւնքներ։ Այն օրը Բերլինում փչրեցին մի մեծ և հատ չդիպայ, որ դարերով կապել կաչկանդել էր միլիոն միլիոն մարդկանց կեանքը, Եւրոպան վրէն մի անլուծելի կոչկոռ դարձած լինելով։ Պայտաձև սեղանի վրա դրված էր Սերբիայի անկախ տէրութիւն ճանաչելու հարցը, որ առաջինը լրջոյ Սալսբրրի այդ խնդրի հետ զբաղեց սեղանի վրա կրօնական ազատութեան խնդրին էլ։ Պարոն Վ. ազդեկնոն ասաց, թէ նա կը ճանաչէ Սերբիան անկախ տէրութիւն միայն այն պայմանով, որ Սերբիայի հպատակները ինչ կրօնքի էլ որ պատկանէին, վայելեն իրաւանց կատարեալ հաւասարութիւն։ Նորանք պէտք է կարողանան մասնակցել բոլոր հասարակական գործքերում, պաշտօններում և պատիւներում, և վարել ամեն կոչում, այնպէս որ կրօնքի տարբերութիւնը պատճառանք չը լինի նորանց ջոկելու։ Ամեն դատաւորութեանց կրօնական պաշտամունքը և արտքին ծիսակատարութիւնը պիտի կատարեսցէս ազատ լինեն և ոչ մի արգելք պիտի չը դրվի ոչ մի կրօնական ժողովրդի կղերական դասուց կազմակերպութեանը (іерархической организаціи) և ոչ նորանց առ իրանց հոգեոր մեծամեծներն ունեցած յարաբերութեանցը։ Այս մէջոցին մեր տէրութեան առաջին ներկայացուցիչ վեսմաչոբ իշխան Գորչակովի ասված խօսքերը ի մէջ այլոց սա էին, թէ իր կողմանէ նա ամենայատրեալ համաձայնութիւն է յայտնում այդ սկզբան հետ և պատրաստ է տարածել դրան (Ռուսատանում) ամենարնդարձակ իմաստով։ Եւ մեր կառավարութեան երկրորդ ներկայացուցիչը վեսմաչոբ կոմս Շուվալով վտանգուրեց կօնգրէսին, թէ ռուսաց կառավարութիւնը փափաքում է իր մէջ կրօնական ազատութեան զարգանալը։

Դեռ երկու տարի չանցած մենք տեսնում ենք այդ ամենայն ու լուսաւոր գաղափարների գործադրութիւնը։ Բոլոր տէրութեան մէջ բաղաքատ ատատարականները, որոնք Թիֆլիսում երկու ժողովներ ունեն, ճանաչվեցան իրրև անկախ և ազատ եկեղեցի։ Բայց աւելի գլխաւորը և կարեւորը նա է, որ ռուսն տիրող եկեղեցին իրրը բաղկել է իր մինչև ցարդ հերձուածող հրատարակած մասերին մօտենալ։ Մայրաքաղաքի լրագրերը այս վերջի ժամանակին մեզ չատ ընդարձակ լուրեր բերին այս նիւթի նկատմամբ։ «Берегъ» լրագիրը, որ իր ուղղութեամբ յայտնի է թէ որքան մեզ է վարչական չանելը պաշտպանելուն, մեծ անոյշանալ զուրս եկել հերձուածողներին պաշտպանելով։ Եւ այդ հերձուածողներից єдиновѣрцы անուած մասը արդէն ճանաչվեցաւ իրրև գրեթէ համաձայնասար եկեղեցի օրթոդոքս եկեղեցու հետ։

Եւ ինչ էր այդ մեծ փոփոխութեան պատճառը։

Նախ և առաջ այն լուսաւոր գաղափարը, թէ մենք՝ մարդիկս բնաւ իրաւունք չունենք իրար խրատի վրա տիրելու։ Աստուած մարդուս ազատ է ստեղծել հաւասարաւոր կամ չը հաւասարաւոր։ Եւ երկրորդը, այս վերջի պատերազմի ժամանակ թէ ռուս ժողովրդը, թէ կղերը և թէ կառավարութիւնը տեսան որ հերձուածողներն էլ (раскольники) ոչ սոսկա հարենասիրական խանդ կամ դեռ էլ աւելի հայրենասիրութիւն ցոյց տուին, քան թէ տիրող եկեղեցու անդամները, այնպէս որ «Берегъ» առաջարկում է հերձուածողներին խրատորին ճանաչել իրրև ազնուականաց ու սուրբ ժողովրդական չերտի մէջ տեղը բռնող մի դաս։

Ահա ինչեր են պատահում լուսաւոր ազգաց մէջ։ Բայց մեր մէջ կան դեռ չատ և չատ անձինք՝ որոնք կուզէին առանց քննելու և դատելու, և միմիայն ուսանդական կերպով ուրիշի սասը կրկնելով, և կամ և մի դար մարդկ, որոնք գիտակցաբար զրոնելով, չատ օգտակար են համարում հալածումներ սարքել, սորան կծել, նորան խանձել և մէջ տեղ իրարք ապրել թերևս մեր ազգից Բերլինի կոնգրէսի գնացած պատգամաւորների խօսքը աւելի կէրև ունեցած լինէր, երբոր հաղցվեցաւ Հայաստանում բնակող հայերի թէ մասին, թէ նորանք փափաքում միայն լուսաւորչականներին ներկայացնելու իրրև հայ իրանց միւս պլատական համարելն և չանդգնեց հայ եղբայրն էլ խառնած լինէին իրանց թանկ տեղ։ Ինչ և իցէ անցեալից և նոյն փակ ներկայումս կատարվող անցքերից խելք առնենք և թողնենք վայելեալ բարդ հալածելու սովորութիւնը։

Եւ չը գիտամ թէ կարծիկ եկեղեցու հոգաբարձուներն ու եկեղեցականները ինչ գաղափար ունեն այս մասին, բայց ես իրրև հայ ատատարական եկեղեցու հոգաբարձու և հոգիս բնաւ չեմ վարանել յայտնել, որ ամեն ընդհանուր ազգային խնդիրներում, ինչպէս է ազգատաց և տատապեաց ու սովիրց օգնելում, մեր հնադիրութիւնը, լեզուն, սովորութիւնքը պահելում, միով բանիւ ազգին ցաւը ցաւելում և ազգի ուրախութեանը ուրախանալում մենք՝ ատատարական հայերս կարողութեան չափով մէկ քայլ ետ չենք մնայ, ի հարկէ առանց մեր կրօնական համոզումներից մէկ հատ նչանախեց զոհելու։ Դուք յարգեցէք մեր համոզումն ու ազատութիւնը, մենք արդէն մեր սկզբանց համեմատ յարգում ենք ձեր համոզումն ու ազատութիւնը։

Ա. Ամիրխանեանց

---

## ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍՈՒՄ մի օտարական հայ հաղորդում է մեզ, որ Զատկի տօնին հրաւիրված է եղել մի քաղաքացու տանը ճաշելու։ Նոյն միջոցին մէկ մէկու հետից յայտնվում էին թիւով 5—6 քահանաներ և սկսում տեղնելի քիր խորտուրդ կատարել։ Ճաշելիքը չուտված մնում է, չը կարողանալով մի կողմից մուրացկան քահանաներին ճանապարհ դնել, միւս կողմից իր հիւրերին հոգալ, և հարեւրութիւնից զուրս գալով, ղրկոտութիւնը հեռացնում է քահանաներին։ Լաւ կը լինէր եթէ հոգեոր իշխանութիւնը վերջապէս կարգադրէր, որ քահանաները, բացի իրանց ծուխից ուրիշներին չը ծանոթացնեն։

Մեզ գրում են ԱԼԻՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ, թէ «Մշակի» 56 համարում տպված «Հայաստատարանական սուրբգրութեամբ նամակում յայտնված մարդերը, իրրը թէ հայ-լուսաւորչականները հաղթում են հայ-ատատարականներին անհիմն են, որովհետև Ալիքսանդրապօլում ոչ յայտնի հայ-ատատարականներ կան, և ոչ էլ ազգեսատուն ունեն որ լուսաւորչականներ կարողանային այնտեղ քարեր ձգել։ Միայն Ալիքսանդրապօլում երբեմն յայտնվում են զանեցի գիւղացիներ, որոնք ոչ իրանց նոր ընդունված զանատեսեան էութիւնը հասկանալով, ոչ էլ լուսաւորչական եկեղեցու ինչ լինելը ճանաչելով, սկսում են փողոցներում զվարճութիւններ անել և գրգռել իրանց նման ռամիկների մոլեռանդութիւնը։

---

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ չամախեցի Միքայէլ Կարապետեանը յայտնեց իրան անանկացած, խօսում են թէ պարոնի պարտատէրերը մէկակ կարգալեան և ազգատ մարդիկ են։ Վերջին ժամանակներում չամախեցի վաճառականների մէջ հանարկա սովորութիւն է դարձել Թուսատանի գանազան քաղաքներից կրեդիտով ապրանք առնել և վերջը իրանց սնանկացած յայտնել։ Բայց ոչ, կարապետեանը մի երկրորդ քայլ կարաւ, տեղացիների քսակներն էլ դատարկելով։

---

Մեզ գրում են ՇՈՒՇԻՑԻ որ հայր Արսատակէս Սեղրպեանը եկեղեցում իր քարոզներին մէջ յայտնեց այն մտքը, որ Զատկի տօներին մատաղի համար հաւաքված զումարի մի մասը արվի աղքատների համար կազմած հոգաբարձութեան չքաւոր ընտանիքներին բաժանելու համար։ Բացի դրանից հայր տուրքը համարեց ժողովրդին փոխանակ Զատկին ձուն սեղան պատրաստելու և չապլ ծախսեր անելու, փոքր յանձնէին նոյն հոգաբարձութեան ազքատներին կերակրելու համար։ Ապրելի սիզդեներում ցուրտ տակաւին այն ատենան սատակի էր, որ քաղաքի մատակարարում գիշերը սառել էին երկու մարդ, մի կին, երկու երեխաներ և մի քանի ոչխարներ, որ պատկանում էին մի թուրք ընտանիքի։

---

ՍԱԼԵԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ ապրիլ ամսվա սկզբին ցուրտը աւելի սասկալացաւ։ չորս օր և գիշեր չարունակ ձեռախառն քամիներ փչեցին, բուք և մրրիկ բարձրացրին։ Գիւղացւոց անասունները, որ այդ միջոցում դաշտ էին դուրս բերել, մեծ մասը կոտորվեցան։ Սալէյման Քէնդի գիւղի 200 տաւարից և 1000 ոչխարից միայն 9 հատ տաւար և 20 հատ ոչխար։ Մի քանի տեղերում յայտնվեցան ոտաած մարդկանց դիակներ։ այս թշուառութեան հետ կուր գետի յորդանաը մեծ հեղեղ է սպառնում Սալեանում։ Մինչև այսօր եօթ առն զոն գնացին հեղեղին Լսում ենք, որ Ջավդաս մօտակայքում մարեխ է յայտնվել։ ոստիկանութիւնը սկսել է անօրինութիւններ անել նրանց ոչնչացնելու համար։

---

Մեզ գրում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, որ տեղական զարդոյ հոգաբարձութիւնը խիստ անարդարութեամբ կերպով է վարում իր պաշտօնը։ Վարժապետները ամիսներով ռօճիկ չը ստանալով, տիպված են եղել մի տարաբ գաղաբեցնել ուսումն, որովհետև պայման հացի սաստիկ թանգութեան ժամանակ, քաղցով փորով աշխատել կարող չեն։ Գանձապետ հոգաբարձուն ոչ հաշիւ է տալիս և ոչ ռօճիկ. ամեն օր նորանոր խռովութիւններ են ծագում։ Անդադար հեռագրում են թեմական տեսուչ պ. Գաբրիեանցին, որ նա հնարք բերէ և զրպրոցը բարեկարգ վիճակի մէջ դնէ, բայց նա սպասում է, որ զարդոցը բոլորովին քանդվի, որ յետոյ ինքը գնայ մի ազոգոց կարդայ...

---

ՍԱԼԵԱՆԻՑ մեզ գրում են, լսում ենք, որ չամախեցի ազաղ-քահանայ Տէր-Սահակ հայրը «Մշակի» յօդուածներից զրդված, դիտաւորութիւն ունի իր սեփականութիւնից նուիրել ի նպաստ Վանի սովատանջների 500 բուբլի։

---

Մեզ գրում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, որ աւլիսի պուրդ թանգացաւ մինչև 6 ր. 50 կոպէկ, Պարսկաստանից ամենեին աւլիս չէ ստացվում, միայն պարսիկները ուղարկում են այս կողմերում ամեն օր բազմաթիւ մշակներ, որոնք սպառում են տեղացին հացը։

---

Մեր պատուելի մշտական թղթակիցներից ոմանք գանգատ են յայտնում, թէ նրանց նամակները մեզ չեն հասնում։ Որքան և ցանկալի լինէր մեզ որ մեր թղթակիցների նամակները յաճախակի լոյս տեսնէին «Մշակի» նամակների մէջ, այսուամենայնիւ, մենք կարծում ենք, որ մեր թղթակիցները մեզ հետ կը համաձայնվեն, որ այժմ Ջանգամանի սուր ամենայն զրաղեցնում է մեզ, որ գոնէ առ ժամանակ պէտք է ներողամիտ գտնվեն, որ նրանց նամակներից կամ լուրեր ենք քաղում և կամ տպագրութիւնը ուշանում է։

---

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են, թէ Նորգի զարդոցների պ. պ. հոգաբարձուների երեք տարվայ ժամանակը լրացած լինելով, հասարակութիւնը ընտրեց նոր հոգաբարձութիւն։ Ժողովուրդը առանձնապէս գոհ մնաց հոգաբարձուների թէ երեք տարվայ գործունէութեան մասին և թէ պ. երեցփոխանի ներկայացրած հաշիւ մասին։

---

ԹԻՖԼԻՍ եկած մի քանի տաճկաստանցի պանդուխտներից ստացանք մի բողոք, որով յայտնում են, թէ իրանց երկրից դէպի ռուսաց հողը գալու ժամանակ սահմանապահ թուրք պաշտօնեաները գանազան սուտ պատճառներ բերելով, չարչարում են նրանց և ուելորդ փողեր են առնում, Օրինակ, պանդուխտների ձեռքում գտնված օրենաւոր անցաթղթերը կեղծի տեղ դնելով, տուգանք են ենթարկում։ Նոյն կերպով կողոպտում են և Ռուսատանից իրանց հարենիքը վերադարձած թիւրքիահպատակ պանդուխտներին և եթէ նրանց մօտ չատ փող է յայտնվում, բոլորովին անհետացնում են խեղճերին։ Մեզ գրել են մի քանի այսպիսի դէպքեր։

---

ՓՕԲԻՑ մեզ գրում են, թէ տեղային երիտասարդութիւնը վճռեց Զատկի տօներին փոխանակ գանազան զուարճութեանց վրա փողեր ծախսելու, հանգանակութիւն անել յօգուտ Վանայ սովատանջների, և այսպէսով գոյացաւ 300 բուբլ և տարարդութիւնը չարունակվում է։

---

Մեզ գրում են ԱԽԱԼՑԽԱՑԻՑ, որ ապրիլ պուրը արժէ 3 ր., հասարակ պանրի պուրը 8 ր. մի ֆունտը 12 կ., երկու հատ ձուն 5 կ., փիմինդրի պուրը 2 ր.։

---

ՆԵՐ.-ԱԳՈՒԼԻՍԻՑ պ. Եփրեմ Գասիեանցը հաղորդում է, թէ երկու տարի առաջ պ. Ց. Նազարեանցը նամակով դիմեց նրան իր աշխատասիրած «Նախապաշարմունք անունով գրքի համար բաժանորդներ գտնել, և ինքը կատարեց նրա խնդիրքը, բայց տակաւին գրքերը չեն ստացվել, չը նայելով, որ յիշեալ աշխատութիւնը բաւական ժամանակ է, որ լոյս է ընծայվել և ինքը քանիցս անգամ նամակով դիմել է հեղինակին, որ կատարէ իր պարտաւորութիւնը։

---

Մեզ գրում են ԱԳԱՆԻՑ, որ կանայք սուտրգրութիւն են բացարել յօգուտ Վանայ սովատանջների։ Մայրերի օրինակին հետևում են և հայոց օրիորդաց զարդացում աշակերտուհիները, և իրանց մէջ նոյն նպատակներով փող են հաւաքում։ Գասմում են, երբ ուսուցիչ պ. Ա. Գրիգորեանցը նրանց սկսեց նկարագրել Վանայ սովատանջ մանուկների դրութիւնը, աշակերտուհիներից չատերը սկսեցին լաց լինել։

---

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ հայոց զարդոցների տեսուչ պ. Բ. Ս. խիստ բարարոսաբար է վարվում թէ աշակերտների և թէ աշակերտուհիների հետ։ Դեռ նրա մանկավարժութեան մէջ առաջին տեղն է բռնում։

---

ՆԵՐ.-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ Լբ-քաղաքների օգնելու նպատակով կազմված է մի խնամատար մասնաժողով, որի անօրէնութիւնը յանձնված է նուիրատուութիւններով հաւաքված 1150 բուբլ։ Այս զումարով գնված ալիրը բաժանվում է չքաւորների բոլորովին ձրի, իսկ փոքր ինչ միջոց ունեցողներին էժան գնով։ Նոյն մասնաժողովի անօրէնութեանն է յանձնված և 2500 բուբլ, որ Թիֆլիսից ալիւր բերել տալ առանց օգոի վճառելի ժողովրդին։

---

Յօգուտ Վանի սովատանջների Ա. Միրզոյեանի բացած պատկերահանդէսը արժանի է այցելութեան։ Հրաւիրում ենք մեր հասարակութեանը այցելել այդ ուշագրաւութեան արժանի հանդէսը։

---

Կրկին մի նոր սնանկութիւն ԹԻՖԼԻՍՈՒՄ։ «Кавказъ» լրագրում որպէս լուր կարդում ենք որ Տէր-Աստատուրով հարուստ վաճառականը այս օրերս սնանկացաւ։ Ասում են որ նրա պարտքը 100.000 բուբլ է։